



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն.....2
- Անկախ դերբայների ըմբռնումը ..... 4
- Անկախ դերբայները Թումանյանի հեքիաթներում.....9
- Եզրակացություն.....16
- Օգտագործած գրականության ցանկ.....17

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գրականությունը խոսքի արվեստ է, որ գործ ունի լեզվի ու բառերի հետ: Լեզուն գրողի զենքն է, ինչպես նկարչի համար գույնն ու վրձինը: Յուրաքանչյուր երկի գեղարվեստական կատարելության չափանիշը ոչ միայն կյանքի ճշմարտացի պատկերումն է, այլև արտահայտչամիջոցների ամբողջությունը, գրողի լեզուն ու ոճը:

Գեղարվեստական գրականության լեզվի մեծագույն անհատականությունը, անշուշտ, Հովհ.Թումանյանն է: Նրա մեծության գաղտնիքը ոչ միայն ստեղծագործությունների թեմատիկայի, գաղափարախոսության, նրա գործածած արտահայտչական միջոցների ու հնարքների, այլև նրա արվեստի, նրա զարմանալիորեն կենդանի, պարզ ու հյուսված լեզվի մեջ է. լեզու, որը մեր իրականության մեջ կոչվում է Թումանյանական լեզու:

Հայտնի է բայերի՝ գործողություն ցույց տվող բառերի քերականական, իմաստային և արտահայտչական կարևորագույն դերը խոսքում: Պատահական չէ, որ Մ.Աբեղյանը բայ ասելով հասկանում էր խոսք կազմող բառ: Այս տեսակետից առանձնապես աչքի են ընկնում Թումանյանի հեքիաթները, որոնց մեջ հանդիպում են դերբայական ձևերը: Դրանք ստեղծելիս Թումանյանը մշակել ու գտել է այնպիսի իրողություններ, որոնք գալիս են ժողովրդից, նրա բառ ու բանից: Նա մեծ վարպետությամբ, այս բառի բարձր նշանակությամբ և, ըստ ամենայնի, ճշմարտացի, միշտ հակիրճ ու կենդանի ձևով պատկերել է մարդկային կյանքի բարդ խնդիրները՝ համեմված դերբայական ձևերով, ինչը էլ ավելի է ոճավորել նրա խոսքը, երանգավորել ասելիքը ու թույլ տվել թափանցել մարդկային հոգիների մեջ, ինչպես՝ «Ինչ մերն է՝ աղջկանը գովելով ման է գալի. լիդրը գզող, լիդրը մանող, համ խճճող, համ խճճուճը հանող, ձևող-կարող, հունցող-թխող, եփող-թափող, մի խոսքով՝ հուրի-հրեղեն, մատները ոսկի»:

Դերբայը լեզվի քերականական յուրահատուկ հասկացություններից մեկն է: Այն հայերենագիտության մեջ երկար ժամանակ ուսումնասիրությունների նյութ է դարձել, ստեղծել տարակարծություններով հարուստ պաշար և դեռ շարունակում է պահպանել իր արդիականությունը: Ինչու՞: Երևի այն պարզ պատճառով, որ մինչ օրս հստակ ու ընդհանուր բնորոշում չունի: Այն խոսքի մեջ ունի անկախ կիրառություն, բայց կա մի հակասություն.«դերբայը» բայի դեր կատարող որևէ բառ է, որը միևնույն ժամանակ նաև անուն կարող է լինել: Միգուցե հենց սրանով են պայմանավորված այս դերբայների ոճական և իմաստային նրբերանգները:

Հետազոտական աշխատանքի շրջանակներում մեր խնդիրն է լինելու մեկ անգամ ևս քննել այս դերբայները, ցույց տալ դրանց կիրառությունները, բացահայտել դրանց ոճական նրբերանգները և երևան հանել այդ բայաձևերի հարաբերակցությունները Թումանյանի հեքիաթներում:

## Անկախ դերբայների ըմբռնումը

Անուն կոչված խոսքի մասից հետո դրվելով՝ բայը ինքնուրույն խոսքի մաս է ճանաչվել և ըստ այդմ խոսք կազմել: Շեշտելով այն միտքը, որ բայը խոսքի մեջ դրսևորվում է երկու ձևով՝ անդեմ-դերբայական և դիմավոր-եղանակային, Ա.Աբրահամյանը նշում է, որ բայի դիմավոր և անդեմ ձևերը իրար հետ սերտ կապեր ունեն: «Ուրեմն՝ դերբայը բայի՝ խոսքի մեջ դրսևորման մի ձևն է: Դերբայն իր տարբեր տեսակներով սերտորեն կապված է դիմավոր ձևերի հետ: Անալիտիկ կազմություն ունեցող դիմավոր ձևերն առանց դերբայների գոյություն չունեն և պատկերացնելի չեն» :

Թեև զարմանալի է, բայց <<դերբայ>> տերմինը հայ քերականագիտության մեջ մինչ օրս հստակ, ընդհանուր ճանաչում գտած սահմանում չունի: Ամենահատկանշական բնութագրումը վերջինիս համար դիմագուրկ լինելն է: Անկախ դերբայները դասակարգելիս լեզվաբանները հանդես են բերել երկու հակառակ ելակետային դրույթներ. առաջինը դրանց դասակարգումն է ըստ խոսքիմասային

պատկանելության, այսինքն հիմք են ընդունել գործառույթունը: Այս տեսակետն են առաջ քաշել Մ.Աբեղյանը, Հր.Աճառյանը: Մյուսը՝ ձևակազմական-ձևաբանականը, որը հիմք է ընդունում բայակազմական հատկանիշները: Ի՞նչ է նշանակում սա: «Այն, որ, նախ անուրանալի է այս բառաձևերի ընդարձակ գործառույթունը լեզվի մեջ որպես <<դերբայական համակարգի >> հետ անհարիր իրականություն, և երկրորդ՝ այդ համակարգը չի արտացոլում դրանցում արտահայտված բառիմաստի իրական պատկերը: Հակառակ դեպքում նման անհարիր իրավիճակ չէր ստեղծվի գործառույթյան և քերականական բնութագրի միջև: Մյուս կողմից՝ բառիմաստի ձևավորման և բայահիմքի կառուցվածքի միջև գոյություն ունեցող անհամատեղելիությունն է պատճառը», -գրում է Բ.Ներսիսյանը: Անդրադառնալով Մ.Աբեղյանի տեսակետին՝ պետք է ասել, որ նա այն առաջին լեզվաբաններից էր, որոնք դերբայ առանձին բառատեսակ կամ խոսքի մաս չեն ճանաչում: Եվ քանի որ Մ.Աբեղյանը բայ ասելով հասկանում էր միայն դիմավոր- եղանակային ձևերը, այսինքն այն ձևերը, որոնք բայիմաստի հետ զուգահեռ արտահայտում են ժամանակ, դեմք, թիվ և հետևաբար նաև ստորոգում, ուստի ստացվում է, որ անդեմ-դերբայական ձևերին հատուկ չեն եղանակի, ժամանակի, դեմքի, թվի քերականական կարգերը, ուստի դուրս է թողնում բայ խոսքի մասից: «Դերբայ ասվում են այն անունները և ածականները, որոնք ցույց են տալիս բայական իմաստ առանց դեմքի: Դերբայները լինում են բայանուն(անորոշ դերբայ) և բայածական (անկատար, ապառնի, անցյալ, ենթակայական): Դերբայներն իսկապես բայ չեն, այլ բայի հիմքից կազմված անուն կամ ածական (մականուն, մակբայ)»,-գրում է Աբեղյանը:

Եթե Աբեղյանը, բայանուն ասելով, հասկանում էր անորոշ դերբայը, իսկ բայածական ասելով՝ ածական դերբայը, ապա Հր.Աճառյանը բայանունը համարում է դերբայից անբաժան հասկացություն, այսինքն բայահիմքից ածանցված գոյականներ: Աճառյանի պատկերացրած բայածականը բայանուն ածականն է: Նա քննության նյութ է դարձրել հատկապես անկախ (բուն) դերբայները, այսինքն՝ անկախ բառային միավորներ և ինքնուրույն բառային կիրառություն ունեցող դերբայները:

Հայագետ ու լեզվաբան ակադեմիկոս Մ.Աբեղյանը հայերենի դերբայները բաշխում է չորս խոսքի մասերի՝ բայի, ածականի, գոյականի և մակբայի միջև. անորոշ դերբայները համարվում են գոյական, ապառնի, հարակատար և ենթակայական դերբայները՝ ածական, իսկ անկատար երկրորդ ձևը՝ մակբայ: Սովորական ածականներից, գոյականներից, մակբայներից դրանք տարբերվում են նրանով, որ մատնանշվում է դրանց՝ բայահիմքից առաջացած լինելը: Ուշագրավ է Հովհ.Բարսեղյանի հետևյալ կարծիքը. «Անկախ դերբայների գործառական դասակարգումը, բացահայտելով այլ խոսքի մասերի և սրանց գործառությամբ հանդես եկող դերբայների ընդհանրությունները, վերահաստատում է գոյական դերբայ (անորոշ), ածական դերբայ (հարակատար, ենթակայական, <<ապակատար>>, ըստ ոմանց նաև ապառնի), մակբայական դերբայ <<համընթացական>> տերմինների և սրանց հասկացությունների գիտականությունը»: Պետք է ասել, որ ապակատար և համընթացական տերմինները առաջարկել է Գ.Ջահուկյանը ժամանակակից հայերենի անդեմ բայերը <<դերբայները>> հոդվածում: Այնուհետև Հովհ.Բարսեղյանը նկատի ունենալով <<լրացական հարաբերությունները>>, այսինքն որպես լրացում հանդես գալու շարահյուսական կիրառությունները, գրում է.«...գոյական, ածական, մակբայական դերբայները, իբրև լրացում բաշխելով տարբեր խոսքի մասերի վրա, իբրև լրացյալ շարունակում են մնալ բայ: Սա այդ բայաձևերի խոսքիմասային-շարահյուսական բնութագրի բնորոշ կողմն է»: Բայց այս ձևով էլ ստեղծվում է երկակիություն, միևնույն բառը մտնում է տարբեր խոսքի մասերի մեջ և միաժամանակ բայ է համարվում: Սա բացատրելու համար Հովհ.Բարսեղյանը, որ <<անկախ դերբայ>> համարվող բայաձևերը Մ.Աբեղյանի նման բաշխում էր գոյական, ածական, մակբայ խոսքի մասերի մեջ, դիմում է Ջահուկյանի փոխակերպման գաղափարին. «Գ.Ջահուկյանը

անկախ գործածության դերբայների այս շարահյուսական առանձնահատկությունները կամ նրանց ոչ բայական գործածությունները մեկնաբանում է <<որպես գործառական փոխակերպումներ>> : Ըստ այդմ էլ հայերենի դերբայներ կազմող մասնիկները, որ մեկ անվանվում են վերջավորություն, մեկ ածանց, հեղինակի կողմից կոչվում են <<գործառական ածանցներ>>, <<...այսինքն՝ ածանցներ, որոնք կատարում են միայն գործառական փոխակերպում, բայց ոչ նոր իմաստի հավելում>> : Ուրեմն գործառական ածանց հասկացությունը <<...ոչ այլ ինչ է, եթե ոչ -ել, -ող, -ած, -իս ածանցների իսկական անվանումը>> :

Ստացվում է, որ <<դերբայ>> տերմինի տակ պետք է հասկանալ և՛ բայ, և՛ գոյական, և՛ ածական, և՛ մակբայ: Դերբայների այս տարբեր խոսքիմասային նշանակություններով գործածվելը պրոֆեսոր Աճառյանը դրանք դիտում է որպես նույն բառի բազմիմաստություն և ոչ թե համանուն տարբեր բառերի արտահայտություն: Ասածից հետևում է Յր.Աճառյանի հետևյալ միտքը.<<Այն բայերը, որոնք ձևով անուն և իմաստով բայ են, կոչվում են դերբայ կամ աներևույթ>> : Աներևույթ ասելով պետք է հասկանալ անորոշ դերբայը, որ նշանակությամբ պատկանում է բային, իսկ գործածությամբ՝ անվան, քանի որ զուրկ է դեմքի արտահայտությունից և կարող է հոլովվել, ուստի <<դեմքի գաղափարից անջատ գործողության գաղափարը մեր մտածողության մեջ ներկայանում է կամ իբրև անուն՝ գոյական, կամ իբրև հատկանիշ՝ ածական>> : Ըստ այդմ էլ <<երբ բայը կատարում է գոյականի դեր, կոչվում է աներևույթ infinitif, իսկ երբ կատարում է ածականի դերը, կոչվում է դերբայ participe>>, և հետևաբար <<այս երկուսը էապես նույնն են >> :

Դերբայները ձևով անուն են, որովհետև կարող են հոլովվել և ապա գործածվել որպես ածական, բայ են, որովհետև ունեն գործողության իմաստ և ապա բուն բայական գործածությամբ կազմում են նաև դիմավոր ձևեր: Կրկին անդրադառնալով այն մոտեցմանը, ըստ որի Մ.Աբեղյանը և Յր.Աճառյանը անկախ դերբայները դասակարգում են ըստ խոսքիմասային պատկանելության՝ հիմք ընդունելով գործառությունը, հարկ ենք համարում նշել, որ ի տարբերություն Մ.Աբեղյանի, Աճառյանի համար դերբայները բայ են: Մ.Աբեղյանի համար դերբայները բայաձևեր են ու նրանցում գործողության իմաստը անկախ նրանից, թե ինչպիսի կիրառություն ունի, զուգորդվում է ժամանակի ձևերին: Որպես օրինակ բերվում է անորոշ դերբայը. <<Անորոշ դերբայն իր բոլոր ձևերով գոյական է և հոլովվում է >> , ապա <<անորոշ դերբայի ժամանակն անհայտ է, նա ծառայում է ընդհանրապես թե իբր ներկա, թե իբր անցյալ և թե իբր ապառնի: Սրանից էլ ծագել է իր անունը>> :

Անկախ դերբայների մասին մանրամասն խոսում է Ա.Աբրահամյանը: Նա <<Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունները>> աշխատության մեջ գրում է, որ դերբայն իր տարբեր տեսակներով սերտորեն կապված է դիմավոր ձևերի հետ, ուստի դերբայական ձևերը հանդես են գալիս դիմավոր ձևերի կազմության մեջ, թեև չեն արտահայտում դեմքի, թվի, ժամանակի, եղանակի քերականական կարգեր, բայց և այնպես ունեն իրենց հատուկ բայական հատկանիշներ՝ բայիմաստ, սեռ, ինդրառություն: Ա.Աբրահամյանը նշում է նաև, որ բացի այս հատկանիշներից անդեմ ձևերն ունեն նաև դերբայական հատուկ իմաստ: <<Այդ իմաստը դերբայի մեջ դրսևորվող գործողության կամ եղելության վիճակն է, որ առանձին դերբայների մեջ առավել ցայտուն լինելով՝ մոտենում է ժամանակի կատեգորիային, սակայն չի ստանում ժամանակի կատեգորիայի որոշակիությունը>> : Դերբայական ձևերի մեջ տեսնելով գործողության վիճակի արտահայտություն՝ Ա.Աբրահամյանը փորձել է դերբայները դասակարգել ըստ գործողության վիճակի արտահայտման յուրահատկությունների և տվել հետևյալ բնորոշումը.<<Բայի դերբայական ձևեր կամ դերբայներ են կոչվում բայի անդեմ ձևերը, որոնք

բայական մի շարք հատկանիշների հետ գործողությունը կամ եղելությունը դրսևորում են տարբեր վիճակներում>> :

Այս տարաբնույթ տեսակետների շղթային ուշիուշով հետևում և արծագանքում է նաև Ե.Աղայանը: Նա խիստ քննադատել է Ա.Աբրահամյանի՝ դերբայների խմբավորման փորձը: Եթե Ա.Աբրահամյանը դերբայների մեջ տեսնում էր վիճակի գաղափար, ապա Ե.Աղայանը ոչ եղանակային ձևերի մեջ տեսնում է կերպի և վիճակի գաղափարներ: Նա առանձնացնում է կերպային և վիճակային դերբայներ, որոնք, սակայն, լիարժեք դասակարգում չեն, դրանք խոցելի են: Վիճակային դերբայները հակադրելով կերպային դերբայներին՝ Ե.Աղայանը գրում է. <<Վիճակային դերբայները ցույց են տալիս ոչ թե բուն իսկ գործողություն, այլ դրա հետ իբրև ենթակա կամ խնդիր առնչվող առարկայի վիճակը. այսպես՝ գնացող, կարդացող, վազող և նման դերբայներն արտահայտում են ոչ թե գնալ, կարդալ, վազել բայերով արտահայտված գործողությունների որևէ վիճակ, այլ որևէ առարկայի վիճակը, որևէ առարկա, որը կատարում է այդ գործողությունը>> :

Այս առումով ուշագրավ է նաև Մ.Ասատրյանի մոտեցումը: Նա Ե.Աղայանի կոչած կերպային դերբայներին անվանում է ինքնուրույն շարահյուսական կիրառությունից զուրկ, և բառային անկախություն չունեցող դերբայներ՝ կախյալ դերբայներ, իսկ վիճակային դերբայներին՝ շարահյուսական կիրառություն ունեցող և հետևաբար նաև բառային անկախություն ունեցող դերբայներ՝ անկախ դերբայներ: Մ.Ասատրյանը նկատում է, որ անկախ դերբայները լեզվի կառուցվածքում համազոր ու համահնչյուն առանձնահատկություններ երևան չեն հանում: Վերջիններիս միակ ընդհանրությունը գործառական տեսակետից այն է, որ նրանք հանդես են գալիս նախադասության ինքնուրույն անդամների պաշտոններով: Այսինքն սրանք շարահյուսական նույն առանձնահատկությունները չունեն, տարբեր են նաև այս դերբայների ձևաբանական առանձնահատկությունները: Ստացվում է, որ <<անկախ դերբայները տարասեռ, տարաբնույթ քերականական առանձնահատկություններ են դրսևորում >> :

Ասածից պարզ երևում է, որ անկախ դերբայներին վերաբերող տարակարծությունների հիմնական և խոսքիմասային պատկանելության ոչ ճիշտ ըմբռնումների պատճառն այն է, որ լեզվաբանների մի մասը -ած, -ող մասնիկները համարել են վերջավորություն (դերբայ), իսկ նրանք ովքեր դրանք ածանց են համարել, հակադրել են -ում, -ել, -ու վերջույթներին, և ասել, որ վերջիններս ունեն քերականական իմաստ, իսկ -ած, -ող մասնիկները՝ բառային իմաստ:

Անկախ դերբայները Թումանյանի հեքիաթներում

Թումանյանը այն մեծագույն անհատականություններից էր, որ գրական լեզուն գեղարվեստականացրեց: Տեղին է հիշել Ավ.Իսահակյանի հետևյալ միտքը.<<Հովի. Թումանյանի լեզուն այնքան վճիտ է և, միևնույն ժամանակ, այնքան պատկերավոր՝ նման լեռնային վտակի...>>:

Բացի բայի դիմավոր, եղանակային ձևերից ոճական երանգավորում ունեն նաև դերբայական ձևերը, որոնք ունեն ինքնուրույն, անկախ կիրառություն և կարող են արտահայտել իմաստային և ոճական նրբերանգներ : Դրանք իրենց յուրօրինակ դրսևորումն ու արտահայտչականությունն են ստացել

Թումանյանական հեքիաթներում: Այստեղ Թումանյանի նախադասությունները հակիրճ ու սեղմ են, անցումները՝ կտրուկ, ասելիքը՝ շատ: Հիշենք սուտոյիկ որսկանի պատմելաձևը.

<<Հադի՛, տու՛ր հա , տու՛ր: -Թե՛ թվանք չունեմ:-Հյուդի՛ , տու՛ր հա, տու՛ր : -Ես էլ չունեմ : -Չատի ...Մատի...-Մենք էլ չունենք: -Բա ի՞նչ անենք>> : Թվում է, եթե սուտոյիկ որսկանի խոսակցությանը մասնակցեր հեղինակը, ապա պատմությունը չէր ունենա այսպիսի արագություն, և աչքի չէր ընկնի իր շքեղությամբ:

Թումանյանի հեքիաթներում բազմիցս հանդիպում ենք անորոշ դերբայի կիրառությունների: Հայտնի է, որ անորոշ դերբայը ցույց է տալիս գործողության և եղելության ընդհանուր գաղափար ու իբրև բայի ելակետային ձև գործողությունը կամ եղելությունը արտահայտում է անորոշաբար, ընդհանուր կերպով: Բերենք մեկ օրինակ <<Քաջ Նազարը>> հեքիաթից.<<Իրեն սիրտ տալու համար սկսում է քթի տակին մոմռալ, երգել, իրեն-իրեն խոսել>> (Էջ 382) :

Արտահայտելով գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար՝ անորոշ դերբայը ժամանակակից հայոց լեզվում գործածվում է երկու՝ դերբայական և փոխանվանական նշանակությամբ :

Հեքիաթներում տեսնում ենք, որ փոխանվանական-գոյականական նշանակությամբ գործածված անորոշ դերբայը շատ ավելին է, քան բայական նշանակությամբ գործածվածները: Հարկ ենք համարում նաև նշել, որ փոխանուն անորոշը տարբերվում է իբրև փոխանուն գործածվող մյուս խոսքի մասերից: Փոխանուն անորոշի դեպքում գործողությունը գոյականացվում է, (թեև որոշ լեզվաբաններ չեն ընդունում այս գործածությունը), բայց ըստ էության բայանվան նշանակությամբ է գործածվում և իբրև այդպիսին էլ հոլովվում է Ու հոլովմամբ՝ կիրառվելով յուրաքանչյուր հոլովի իմաստը պայմանավորող և գոյականին հատուկ մի շարք շարահյուսական պաշտոններով: Ահա համապատասխան օրինակներ.<<Փողի գտնելը հեշտ է>>, <<Ասում են թագավորը արգելել է ջուր ծախելը>>(Էջ 374), <<Չի կարողանում ուրախանալ, բախտավոր զգալ>>(Էջ 335):

Անորոշ դերբայի սեռական-տրական հոլովաձևը կիրառվում է այնպես, ինչպես գոյականի սեռական-տրական հոլովաձևը, այն է՝ որպես գոյականից կախված ձև հանդես է գալիս որոշի կամ հատկացուցչի պաշտոնով (սեռական), իսկ որպես բայից կախված ձև՝ խնդրի կամ պարագայի պաշտոնով (տրական): Ասածը ցույց տանք մի քանի օրինակներով՝ <<Չէ՛, ես քեզ ընկերակցելու ժամանակ չունեմ>>(Էջ 337), <<Հիմարը իր մոզին տանում է ծխելու>> (Էջ 358), <<Տերը վեր է կացնում ծառային, դրկում է արտը հնձելու>>(Էջ 354), <<Գնում է արոտ անելու>>(Էջ 340):

Քննելով Թումանյանի հեքիաթները, տեսնում ենք, որ այստեղ առկա են մեծ թվով անորոշ դերբայներ, որոնք դրված են հատկապես գործիական հոլովով: Օրինակ՝ <<Ծոծրակը քորելով ճամփա է ընկնում>>(Էջ 393), <<Քեֆի լավ ժամանակ մի բզեզ է ներս մտնում ու բըռռացնելով պտտվում սենյակում>>(Էջ 370), <<Փոշի բարձրացնելով գալիս է թագավորը>>(Էջ 350):

Անորոշի բացառական հոլովը սովորաբար հանդես է գալիս անջատման անուղղակի խնդրի և պատճառի պարագայի պաշտոնով: Օրինակ՝ <<Շատ թափառելուց թփերն ու փշերը հագի շորերը տանում են>>, <<Ամբողջ օրն աշխատում էր, շատ աշխատելուց կուչ եկավ, պստիկացավ>>(Էջ 370):

Հեքիաթներում մեկ ու կես տասնյակի է հասնում անկատար դերբայի –իս-ով ձևը: Տարբեր լեզվաբաններ տարբեր կերպ են անվանում այս դերբայը, այն է՝ անկատարի երկրորդ ձև կամ



տարբերակ (Մ.Աբեղյան, Ա.Աբրահամյան), ժամանակային (Է.Աղայան), հարակցական (Ս.Աբրահամյան), գուգրնթացական (Ն.Պառնասյան), համընթացական(Գ.Ջահուկյան), անկատար երկրորդ (Մ.Ասատրյան): Այն որպես ինքնուրույն, առանձին դերբայ ճանաչվել է Մ.Աբեղյանի կողմից: Ըստ նրա անկատար դերբայը բայական իմաստի հետ ցույց է տալիս եղելության մեջ լինելը կամ մի կատարվող եղելություն, որ դեռ տևում է հարածիգ :

Ա.Աբրահամյանը ասում է, որ այս դերբայի մեջ զգացվում է ենթակայի հարակայելը : Իսկապես –իս-ով անկատարը ինքնին ընթացքի մեջ գտնվող գործողություն է ցույց տալիս և անկախաբար գործածվում: Հեքիաթներում անկատար դերբայի առկայությունը և այդ դերբայը ձևավորող մասնիկի ձևափոխությունը ցույց տալու համար բերենք օրինակներ: <<Մի անգամ էլ օտարություն գնալիս հարցնում է>>(Էջ 376), <<Մի հին ավերակի մոտից անցնելիս էլ որ ձեն է տալի- ա՛ մոզի, արի, հե՛յ...>>(Էջ 358), <<Հերը անչափ սիրելիս է լինում աղջկանը>> (Էջ376):

Անկատար դերբայը միավանկ գալ, տալ, լալ բայերի հետ սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակներն է կազմում, օրինակ՝ <<Իրիկունը տուն գալիս մտածեցի, թե՛ հո ես մարդ չեմ սպանելու>>(Էջ 375), <<Նրա հետ դուրս գնալիս դուրս էր գնում, տուն գալիս՝ տուն գալի>>(Էջ 380): Այն նաև երկրորդական բայական բաղադրյալ ժամանակների կազմությանն է մասնակցում: Ներկայացնենք մի քանի այդպիսի օրինակներ.<<Մի պատռված քուրք հագին, մի այլուր փոստալ գլխին ապրելիս է լինում գետի ափին, իր կիսավեր ջրաղացում>> (Էջ 346), <<Ճամփին մի լճի ափով անց կենալիս է լինում>>(Էջ 394), <<Մի գիշեր էլ Էսպես, դերվիշի շոր մտած, անցնելիս է լինում մի խուլ փողոցով>>(Էջ 371), <<Էս մարդ ու կնիկը իրար հավանելիս չեն լինում>>(Էջ365):

Պետք է նաև նշել, որ իբրև նախադասության ինքնուրույն անդամ –իս-ով անկատարը ժամանակային իմաստ է արտահայտում՝ հանդես գալով ժամանակի պարագայի շարահյուսական պաշտոնով: Բերենք մեկ օրինակ.<< -Ախպեր, աստծու մոտ գնալիս քեզանից հետո մի սիրուն աղջիկ ու մի չոր ծառ էլ պատահեցին>>(Էջ 337):

Թումանյանի հեքիաթներում դերբայական ձևերը ունեն իրենց հատուկ երանգավորումը: Դրանք էլ ավելի են ոճավորել նրա խոսքը, դարձրել ավելի տպավորիչ ու կենդանի.<<Էսպես հերթով իրար բոթելով ու հարցնելով բանը մնում է վերի ծերին նստած տերտերին>>:

Ուսումնասիրելով հեքիաթները, տեսնում ենք, որ այստեղ ակտիվ են հարակատար դերբայով բայածևերը: Ա.Աբրահամյանը վկայում է, որ <<Հարակատար դերբայը ցույց է տալիս կատարված, ավարտված գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար՝ որոշ հետևանքով, իբրև գործողի կամ եղողի տևական կամ ժամանակավոր հատկանիշ>> : Գ.Սևակը հարակատար դերբայի հիմնական գործածությունը համարում է այն, որ օժանդակ բայի հետ բաղադրում է հարակատար ժամանակ: Նա գրում է, որ այն մասնակցում է բայի եղանակաժամանակային ձևերի կազմությանը և օժանդակ բայի հետ բաղադրվելով կազմում է սահմանական եղանակի հարակատար և անցյալի հարակատար ժամանակները, իսկ «լինել» բայի հետ կազմում է երկրորդական բաղադրյալ ժամանակներ, ինչպես՝ <<Մի օր էլ շեմքումը նստած է լինում, տեսնում է մի մարդ վռագ-վռագ փողոցով անց է կենում>>(Էջ 365), <<Աղջիկը արդեն Արագածի ստորոտն է լինում հասած>>(Էջ 378), <<Դու մի ասիլ՝ հնուց էդ պատում գանձ է եղել պահած>>(Էջ 359), <<Դու մի՛ասիլ հարբած հարսանքավորների տարածած լուրը սրանց էլ է լինում հասած>>(Էջ 385):

Բայական-դերբայական նշանակությամբ հարակատար դերբայը նախադասության մեջ լինում է որոշիչ, օրինակ՝ «<Ես հարուստը մի չսսված պայման է դնում ծառային>>(Էջ 353), «<-Ես եմ,- պատասխանեց զարմացած Յասանը>> (Էջ 374), «<Եսպես զարհուրած Նազարը մեջքին կպած Ես խրտնած վագրը փախչում է>>(Էջ 386): Գործածվելով որպես որոշիչ՝ հարակատար դերբայը ցույց է տալիս առարկայի հատկանիշը որպես դրություն, վիճակ: Ահա համապատասխան օրինակ «<Խելոքն ու հիմարը>> հեքիաթից. «<Գնում է տեսնում՝ ոսկորները դես ու դեն ցրված ավերակի առջև>>(Էջ 358): Այսպիսով հարակատար դերբայի մեջ դրսևորվում են և՛ գործողության, և՛ հատկանիշի (դրության, վիճակի) նշանակություններ:

Հարակատարով արտահայտված որոշիչը լինելով բայական ձև և պահպանելով բայական խոսքի մասին հատուկ շարահյուսական հատկանիշները՝ կարող է ունենալ կողմնակի ենթակա, խնդիրներ ու պարագաներ՝ այսպիսով կազմելով դերբայական դարձված և առարկան բնորոշելով ավելի բազմակողմանիորեն : Բերենք մի քանի այդպիսի օրինակներ. «<Նազարը խռոված պատի տակին արևկող արած սպասում է, որ կնիկը գա տուն տանի>>(Էջ 381), «<Տանըցիք վեր են թռչում, տեսնում՝ երեխեն օրորոցումը մորթած>>, «<Ճարը կտրած գնում է մի պատի տակ կուչ է գալի>>(Էջ 381):

Ինչպես ցույց են տվել փաստերը, հարակատար դերբայը հանդես է գալիս նաև ձևի պարագայի պաշտոնով: Գրեթե բոլոր հեքիաթների մեջ առկա է այս կիրառությունը: Օրինակ՝ «<Չարհուրած ու կատաղած ետ է գալի>> (Էջ 352), «<-Չախչախ թագավորն ո՞վ է,- զարմացած հարցնում է թագավորը>>(Էջ 347), «<...հազիվ են կարողացել զսպել ու շրջապատած բերում են>>(Էջ 389):

Կամ.«<Փանոսը մտում է լճի ափին կանգնած միտք անելիս>> (Էջ 394), «<...Էնպես մի փառք ու պատիվ, որ Նազարը մնացել էր ապշած շըշկված>> (Էջ 389):

Ձևի պարագան բնութագրում է գործողությունը ձևի տեսակետից, այսինքն ցույց է տալիս, թե ենթական ինչ դրության մեջ լինելով, ինչ վիճակում է կատարում տվյալ գործողությունը : Այս մասին են վկայում հետևյալ օրինակները.«<Գյուղացիք սարսափած վագեցին տիրոջ ետևից>>(Էջ 345), «<-Չ'է, չեմ բարկանում,- վախեցած պատասխանում է տերը>>(Էջ 355), «<Կարդում է ու զարհուրած հայտնում է իր կողքի նստածին>>(Էջ 383):

Հարակատարը իբրև փոխանուն կարող է նաև գործածվել գոյականաբար: Հասկանալի է, որ այն հատկանշվում է գոյականին հատուկ քերականական իրողություններով՝ հոլովվում է, ենթարկվում է Ի հոլովման, հոդ է առնում, ունենում է եզակի և հոգնակի թիվ, իսկ նախադասության մեջ հանդես է գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով՝ ենթակա, ստորոգելիական վերադիր, խնդիր, հատկացուցիչ: Օրինակ՝ «<Վա՛յ, քու կերածն էլ հարամ ըլի, քու արածն էլ...Ես ինչ կրակի մեջ ընկա...>>(Էջ 356):

Այսպիսով՝ հարակատար դերբայի համար ստացվում է գործառական երկակի վիճակ. խոսքի մեջ բացի որոշիչ ու պարագայի դերով հանդես գալուց այն մասնակցում է նաև բայի խոնարհման համակարգին՝ կազմելով վերլուծական ժամանակային ձևեր:

Թումանյանի ստեղծագործությունների հմայքն ու գաղտնիքը դրանց պարզության մեջ է, բայց պարզությունը միաժամանակ ենթադրում է մտքի խորություն և հասկանալիություն: Նրա արտահայտչական զինանոցն այնքան հարուստ է, որ նույն ստեղծագործության մեջ հնարավոր է գտնել բազմազան արտահայտչամիջոցներ ու հնարներ: Նկատելի է, որ հեքիաթներում Թումանյանը քանիցս դիմել է բարբառային տարրերի: Դրանք հեղինակին հնարավորություն են տվել զգացնել տալ

բարբառի համն ու հոտը, ասելիքը ներկայացնել ավելի պարզ ու հասկանալի: Բարբառային ձևերին դիմելիս՝ Թումանյանը դրանք գործածել է վարպետորեն .«Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դագանակ ուներ, որ Էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում»>>(Էջ 345), «<Գնում է կարասի բերանը բաց անել է տալի»>>(Էջ 352), «<Չարհուրած ու կատաղած ետ է գալի»>> (Էջ 352), «<Մի օր էլ գետի ափովն անց կենալիս լսում է, որ գորտերը կոկոռում են»>> (Էջ 369): Բառերի արտահայտման այսպիսի միջոցները հավաստում են, որ դրանք այնուամենայնիվ հեղինակի վերաբերմունքը, հեղինակային հույզը և ապրումը ցույց տվող ձևեր են :

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ենթակայական դերբայը: Այն հայերենագիտության մեջ երկար ժամանակ անվանել են ներկա դերբայ: Հր.Աճառյանը վկայում է, որ այս ձևը ժառանգություն է մնացել հին գրաբարից, թեև շատ հազվագյուտ է կիրառվել այդ ժամանակ : Ա.Աբրահամյանը այս դերբային տվել է «<ընդունելութիւն ներկա»>> անվանումը, իսկ Մ.Աբեղյանի կողմից առաջարկվել է հենց ենթակայական դերբայ անունը: Ահա այդ մասին ինչ է ասում լեզվաբանը՝ Մ.Աբեղյանը.«<ենթակայական դերբայը քերականները դնում են իբրև ներկա դերբայ, բայց այս դերբայը կարող է բոլոր ժամանակների իմաստով ևս բանել և հաճախ ժամանակի ոչ մի որոշ իմաստ չի ցույց տալիս, այլ այնպիսի եղելություն, որ միշտ, ամեն ժամանակ կարող է լինել»>> : Այն բայի եղանակաժամանակային ձևերի կազմությանը չի մասնակցում և որպես անկախ դերբայ է գործածվում հայոց լեզվում:

Ենթակայական դերբայը բայական իմաստի հետ ցույց է տալիս ենթակայող, շարունակական ընթացքի մեջ գտնվող և իբրև կայուն հատկություն ըմբռնվող գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար , այսպես օրինակ՝ «<Աշխարհքը մնում է գեղեցիկ հաղթողին»>>(Էջ 380):

Առավելապես իբրև որոշիչ է գործածվում՝ բնութագրելով առարկան ենթակայող, շարունակական ընթացքի մեջ գտնվող գործողության հատկությամբ: Ներկայացնենք մի քանի այդպիսի օրինակներ.«<Իհարկե հողատիրոջը,- ձայն է տալիս վարող գյուղացին»>>(Էջ 352), «<Ես հենց էն խոսող ձուկն եմ, որի կյանքը դու ինայեցիր»>>(Էջ 363), «<Էստե՞ղ է կենում քե՞ք սիրող Հասանը»>>(Էջ 374):

Ենթակայական դերբայի կիրառությունների մասին խոսելիս պետք է ասել, որ այն կարող է նաև հանդես գալ իբրև ստորոգելիական վերադիր: Օրինակ՝ «<-Չէ, վարողինն է,-մեջ է մտնում հողատերը»>> (Էջ 352):

Ենթակայական դերբային, որպես բայի, հատուկ է անցողականության քերականական կարգը, որը գործողի անվան նշանակություն արտահայտող ածականին ու գոյականին հատուկ չէ: Նշենք, որ ենթակայական դերբայը ուղիղ խնդիր է պահանջում կամ կարող է պահանջել անկախ նրանից, թե նախադասության ինչ անդամների պաշտոններով է գործածված, ածականաբար, թե գոյականաբար է կիրառված :

Հր.Աճառյանը ասում է, որ -ող ձևով դերբայները թե՞ ածական են, թե՞ գոյական. վերջին դեպքում կարող են ստանալ որոշիչ հոդ: Օրինակ՝ «<-Չենդ կտրի, տեղդ նստի, քարվան կտրողիս մտիկ արա...»>>: Հետևաբար այն նաև կարող է հոլովվել՝ ենթարկվելով Ի հոլովման.ինչպես՝ «<Ընկերն էլ իր տուն ու տեղը, իր կնկանը բերում է ու Էնտեղ ապրում են, որ գուցե թե գնացող-եկողից մի բան իմանան»>>, «<Վա՛յ բու դեսը դրկողի վիզը կտորի...»>>(Էջ 356), «<Քե՞ք անողին քե՞ք չի պակսիլ»>> (Էջ 371):

Թումանյանի հեքիաթներում սակավաթիվ գործածություն ուներ ապառնի դերբայը: Ինչպես հայտնի է, որոշ լեզվաբաններ այն տեսակետն են հայտնել, որ ապառնի դերբայը կազմվում է միայն –ու

ձևով, սակայն կան նաև այնպիսի լեզվաբաններ, ովքեր ապառնի դերբայ են համարել նաև անորոշ դերբայ+իք և անորոշ դերբայ+ի ձևերը. <<Ապառնի դերբայը, որ ցույց է տալիս եղելության նոր կատարելի լինելը, կազմվում է ՈԻ, Ի, ԻՔ վերջավորություններով, որոնք ավելանում են անորոշ դերբայի վերջից...>> : Ստացվում է, որ -իք-ը ոչ թե բառահարաբերական, այլ բառակազմական ձևույթ է, որով կազմվում են բազմաթիվ բառեր՝ ածականի ու գոյականի խոսքիմասային նշանակությամբ (գնալիք, գիտելիք):

Ապառնի դերբայը ցույց է տալիս կատարելի գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար՝ արտահայտելով առարկայի որակական կամ առարկայական իմաստ: Օրինակ՝ <<Աչքդ էն բարին տեսնի, ինչ որ լցնում են առաջը - թե ուտելիք, թե խմելիք>> (Էջ 383):

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Չետագոտական աշխատանքի առաջին հատվածում անդրադարձել ենք անկախ դերբայների ըմբռնմանը հայերենագիտության մեջ, որտեղ տեսնում ենք, որ հին շրջանից մինչև մերօրյա քերականության մեջ վիճելի և խնդրահարույց հարցերից մեկը՝ դերբայների ըմբռնումը, դեռ իր վերջնական լուծումը չի ստացել: Եվ քանի որ դերբայները յուրօրինակ գործածություն ունեն, դրանք այս կամ այն կերպով են մեկնաբանվում: Որոշ լեզվաբաններ դրանք համարում են առանձին խոսքի մաս, իսկ Մ.Աբեղյանը՝ դրանք տեղաբաշխում է տարբեր խոսքի մասերի մեջ: Չետագայում Գ.Սևակը, կարևորելով բայի հիմնական հատկանիշները (բայիմաստ, սեռ, խնդրառություն, ընդարձակում է դերբայական ձևերի բոլոր դրույթները: Այս բոլորը ցույց են տալիս, որ հայերենի դերբայներից յուրաքանչյուրը լեզվի համակարգում տարբեր առանձնահատկություններ է երևան բերում, ուստի դրանք չպետք է քննվեն նույն հարթության վրա:

Չետագոտական աշխատանքը թույլ տվեց համոզվել, որ ինչպես ժամանակակից հայերենում, այնպես էլ Թումանյանի հեքիաթներում հարակատար դերբայը ամենատարածվածն է, և այս դերբայով կազմված կառույցները չեն շեղվում ընդհանուր հարացույցից: Այսպես, հեքիաթներում այն կիրառվում է հիսուններեք անգամ՝ հիմնականում որոշիչ շարահյուսական պաշտոնով:

Իր ծավալային ընդգրկմամբ երկրորդն է անորոշ դերբայը: Այն նույնպես չի շեղվում ընդհանուր օրինաչափությունից. մեզ հանդիպում է քառասունհինգ օրինակ, որտեղ գործածվում է երկու՝ դերբայական և փոխանվանական նշանակությամբ, թեև որոշ լեզվաբաններ չեն ընդունում այս վերջին կիրառությունը:

Արձանագրում ենք, որ մեկ ու կես տասնյակի հասած անկատար դերբայի -իս -ով ձևերը համապատասխանում են ընդհանուր օրինաչափությանը:

Քննելով Թումանյանի հեքիաթները և ուսումնասիրելով այնտեղ առկա դերբայները՝ տեսնում ենք մի հետաքրքրական փաստ. ապառնի երկրորդը կիրառվում է մեկ անգամ:

Գրեթե մեկ տասնյակի է հասնում և առավելապես իբրև որոշիչ է գործածվում ենթակայական դերբայը:

Այսպիսով՝ օրինակները այն եզրակացության են բերում, որ հայերենի դերբայական ձևերից մի քանիսը հենց ինքնին հանդես են գալիս գոյականին, ածականին ու մակբային հատուկ շարահյուսական կիրառություններով՝ նախադասության մեջ գործածվելով որպես ենթակա և խնդիր

(անորոշ, ենթակայական, ապառնի երկրորդ), որոշիչ (ենթակայական, հարակատար, ապառնի երկրորդ) և ժամանակի պարագա (անկատար երկրորդ):

#### ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղեան Մ., Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906
2. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965
3. Աբրահամյան Ա., Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, 1953
4. Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան 1967
5. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ.5, Երևան, 1965
6. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ.2, Երևան, 1973
7. Բարսեղյան Հ., Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Երևան, 1980
8. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտությունը, Երևան, 2007
9. Թումանյան Հովհ., Ընտիր երկեր, Երևան, 1978
10. Հարությունյան Հ., Գեղարվեստական խոսք, Երևան, 1986
11. Մարգարյան Ա., Հայոց լեզվի քերականություն, Երևան, 2004
12. Ներսիսյան Բ., 'Դերբայը' ժամանակակից արևելահայերենում, Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2005
13. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայոց լեզվի անդեմ բայերը <<դերբայները>>, Բանբեր Երևանի համալսարանի, հ.3, 1975